Ինչպե՞ս պետք է նախապատրաստվեմ նահանգային լսմանը:

Իրավապաշտպանը կարող է օգնել ձեզ պահանջել նահանգային լսում և պատրաստել անհրաժեշտ փաստաթղթերը: Հետևյալ տեղեկությունները կօգնեն ձեզ ներկայացնել ձեր գործը՝

1. Գրեք ձեր գործի փաստերը:
2. Ձեզ հետ բերեք ցանկացած տեղեկության օրինակներ, ինչպիսինն են հայտարարագրերը ու ծանուցումները, որոնք կարող են օգնել ձեր գործին:
3. Պատրաստեք վկաների և այն մարդկանց ցուցակը, ովքեր կարող են ձեր օգտին խոսել լսման ժամանակ:

Լսումը կնշանակվի 45 օրվա ընթացքում՝ Նահանգային լսման գրասենյակում ձեր դիմումը ստանալուց հետո: Ձեզ կտեղեկացնեն լսման ամսաթվի, ժամի և վայրի մասին: Եթե չեք կարող ներկայանալ, ապա խնդրեք լսման նոր ամսաթիվ կամ հեռախոսային լսում:

Առկա են թարգմանչական անվճար ծառայություններ: Խնդրանքի դեպքում տրամադրվում են չափավոր հարմարանքներ: Օգնության համար զանգահարեք Նահանգային լսման գրասենյակ՝ (866) 289-4714 հեռախոսահամարով:

Վճիռ բողոքի վերաբերյալ և նահանգային լսման ժամանակացույց

Դուք պետք է ներկայացնեք ձեր բողոքը երեխաների օգնության տեղային գործակալություն 90 օրվա ընթացքում այն պահից, երբ գիտեիք կամ պետք է իմանայիք ձեր բողոքի առարկայի մասին:

Դուք պետք է նահանգային լսում պահանջեք 90 օրվա ընթացքում այն պահից, երբ ստացել եք երեխաների օգնության տեղային գործակալության (ԵՕՏԳ) գրավոր պատասխանը ձեր բողոքին:

Եթե ԵՕՏԳ-ն ձեր բողոքին գրավոր պատասխան չի տալիս, ապա պետք է նահանգային լսում պահանջեք 90 օրվա ընթացքում այն պահից, երբ բողոք եք ներկայացնել ԵՕՏԳ-ին:

Նահանգային լսումը կանցկացվի.45 օրվա ընթացքում այն պահից, երբ Նահանգային լսման գրասենյակը ստացել է ձեր պահանջը:

Դիմեք երեխաների օգնության տեղային գործակալություն՝

866-901-3212 անվճար հեռախոսահամարով
(ԱՄՆ-ում)

TTY 866-399-4096

Arnold Schwarzenegger, *Governor*
State of California

Kimberly Belshé, *Secretary*
California Health and Human Services Agency

Jan C. Sturla, *Director*
Department of Child Support Services

1-866-249-0773 (անվճար հեռախոսահամար)
TTY 1-866-223-9529 (անվճար հեռախոսահամար)
www.childsup.ca.gov

PUB 253 (11/09)

Օգնություն Կալիֆորնիայի երեխաներին

Ինչպե՞ս լուծել երեխայի օժանդակ օգնության ձեր գործի խնդիրները:

Երեխաների Օգնության Ծառայությունների Բաժին

Բողոքի վճռման ծրագիր

Եթե բավարարված չեք երեխաների օգնության տեղային գործակալությունից (ԵՕՏԳ) ստացված օգնությամբ, ապա իրավունք ունեք բողոք ներկայացնել Բողոքի վճռման ծրագրի միջոցով:

Երեխային խնամող կողմը կամ չխնամող ծնողը կարող են բողոք ներկայացնել, եթե գործ է բացված ԵՕՏԳ-ում:

Բողոքները, որոնք **կարող են** լուծվել Բողոքի վճռման ծրագրի միջոցով, հետևյալն են՝

- գործը բացելու կամ փակելու որոշում
- երեխայի օժանդակ օգնության դատավճռի հաստատման խափանում
- վճարումների գանձում և բաշխում
- ուշացված վճարումների հաշվարկում
- երեխայի օժանդակ օգնության գումարի փոփոխման փորձեր
- ծառայության ժամանակին տրամադրում
- հարկադրման փորձեր:

Բողոքները, որոնք **չեն կարող** լուծվել ծրագրի միջոցով, հետևյալն են՝

- երեխայի օժանդակ օգնության դատարանով վճռված գումար կամ ուշացված վճարումներ, խնամք, այցելություններ, ամուսնական օգնություն կամ ծնողական հարաբերությունների որոշում
- • բողոքներ դատական ծառայությունների վերաբերյալ. օգնության համար դիմեք դատարանի Ընտանեկան օրենսդրության պատասխանատուին, փաստաբանին կամ իրավաբանին
- քաղաքացիական իրավունքների խախտում
- ծառայություններ, եթե հայցվորն երեխայի օժանդակ օգնության վերաբերյալ բաց գործ չունի:

Ինչպե՞ս բողոք ներկայացնեմ:

Ներկայացրեք ձեր բողոքը հեռախոսով կամ անձամբ, կամ ձեռք բերեք «Բողոքի վճռման պահանջ» ձևը ձեր ԵՕՏԳ-ից կամ Երեխաների Օգնության Ծառայությունների Կալիֆորնիայի Բաժնի ինտերնետային կայքից՝ www.childsup.ca.gov: Բողոքի ձևը փոստով կամ անձամբ ներկայացրեք ԵՕՏԳ:

Դուք պետք է ներկայացնեք ձեր բողոքը ԵՕՏԳ-ին 90 օրվա ընթացքում այն պահից, երբ գիտեիք կամ պետք է իմանայիք ձեր բողոքի առարկայի մասին:

Զրուցեք իրավապաշտպանի հետ:

Եթե ձեզ օգնություն է հարկավոր, խնդրեք զրուցել ԵՕՏԳ-ի իրավապաշտպանի հետ:

Նրա աշխատանքն է՝

- օգնել ձեզ ստանալ երեխայի օժանդակ օգնության ծառայություններ
- բացատրել ձեր իրավունքները ու պարտականությունները
- օգնել ձեր գործի հետ կապված խնդիրներում
- բացատրել բողոքարկման գործընթացը բողոք ներկայացնելուց առաջ, ընթացքում և հետո
- օգնել ձեզ նահանգային լսում պահանջել և պատրաստվել դրան, եթե դժգոհ եք բողոքի վճռման գործընթացի արդյունքներից:

Ի՞նչ է արվելու իմ բողոքի վերաբերյալ:

Ձեր բողոքին ծանոթ որևէ մեկը, որն այդ գործի աշխատողը չէ, կհետաքննի և կփորձի լուծել ձեր բողոքը: Նա կտեղեկացնի ԵՕՏԳ-ին, թե ինչ պետք է արվի խնդիրը լուծելու համար: Բողոքի հետաքննողը կկապնվի ձեզ հետ ձեր բողոքը ստանալուց քիչ անց:

ԵՕՏԳ-ից պահանջվում է բողոքի վերաբերյալ գրավոր ձևով վճիռ կայացնել 30 օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում ԵՕՏԳ-ը կարող է երկարացնել այդ ժամկետն առնվազն ևս 30 օրով: Եթե բողոքի վճռման ժամկետն երկարացվել է, ԵՕՏԳ-ից պահանջվում է ձեզ գրավոր ծանուցագիր ուղարկել՝ բացատրելով երկարացման պատճառը:

ԵՕՏԳ ձեզ կուղարկի բողոքի վճռման գրավոր ծանուցագիր, որը կպարունակի տեղեկություն, թե ինչպես պահանջել նահանգային լսում, եթե բավարարված չեք ձեր բողոքի պատասխանով:

Նահանգային լսման ծրագիր

Եթե բավարարված չեք ԵՕՏԳ-ի պատասխանից, ապա իրավունք ունեք ներկայացնելու ձեր բողոքի խնդիրները նահանգային լսման ժամանակ:

Հետևյալ վեճերը **չեն կարող** լսվել նահանգային լսման ժամանակ՝

- դատարանում լուծվող խնդիրներ
- երեխայի օժանդակ օգնության դատարանով վճռված գումարներ
- ծնողական հարաբերություններ/հայրություն
- երեխայի խնամք կամ այցելություն
- անարգելի դատավարություն
- քաղաքացիական իրավունքների խախտում
- ԵՕՏԳ-ի աշխատողի անվայել վերաբերմունք:

Ինչպե՞ս պահանջեմ նահանգային լսում:

Զրուցեք իրավապաշտպանի հետ կամ ձևը պահանջեք՝:

- երեխաների օգնության ձեր տեղային գործակալությունից,
- Երեխաների Օգնության Ծառայությունների Կալիֆորնիայի Բաժնի ինտերնետային կայքից՝ www.childsup.ca.gov,
- Նահանգային լսման գրասենյակից՝ (866) 289-4714 անվճար հեռախոսահամարով, ֆաքսով՝ (916) 464-5069, կամ էլ. փոստով StateHearings@dcss.ca.gov;
- Գրեք՝ California Department of Child Support Services
  Office of Legal Services State
  Hearings, P. O. Box 419087
  Rancho Cordova, CA 95741-9087.